


ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԿԱՐԻԱ
Տարեկան . . 12 Ֆր.
Վեցամսեայ . . 6 "
ԱՐՏԱՍԱՀԱՆ
Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ֆր.
Վեցամսեայ . . 7 "
ԱՄԵՐԻԿԱ
Տարեկան 2.60 Տօլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծրանշման տողը
20 սանդիւն



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Հ Ա Ս Յ Ե

Rédaction du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на вѣстникъ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս

չեն տրուիր

ՈՉԻՆՉ ԿԸՆԵՆ

Ահա ամիսներ կանցնին ազատա-
միտ կամ երիտասարդ թուրքերու
վերջին համաժողովէն ի վեր, նոյն-
պէս ֆրանս փաշայի և իրեն բաղ-
դակից շատ մը Օսմանցիներու յա-
ջորդաբար ու խմբովին աքսորումը
մոռացութեան կը մատնուի, և
պատմութեան մէջ յաճախ տես
նուաժ սովորական դէպքերու կարգը
կանցնի:

Երիտասարդ թուրքերու խան
դավառ համաժողովին յաջորդող
լուծիւնը և Պոլսոյ մէջ բարձրա-
տիճան ու ժողովրդականութիւն ու
նեցող անձնաւորութեանց դէմ վեր-
ջերս ի գործ դրուած բռնակալա-
կան հալածման հանգէպ՝ իսլամ
ժողովուրդին մեռելային անշար-
ժութիւնը անգամ մը եւս կուգան
մեզ այն համոզման մէջ հաստա-
տել, թէ թուրք տարրը դեռ շատ
հեռու է գաղափարի անձնուէր
զաւակներ ունենալէ:

Քառորդ դարէ ի վեր է որ ա.
զատամիտ թուրքերու դասակարգ
մը գոյութիւն ունենալ կը կար-
ծուի Տաճկաստանի մէջ. այդ դա-
սակարգը, Միտհատէ սկսած, այլ
և այլ առիթներու ու ժամանակնե-
րու մէջ իր գոյութիւնը ապացու-
ցած է գրչի ծայրով միայն. այ-
սինքն երբեմն եւաքաններով և վեր-
ջին տասնեակ տարիներու մէջ ալ
արտասահման հրատարակուած
թերթերով, բայց այդ ամբողջ
ընթացին մէջ զաղափարի ծաւալ-
ման համար հինգ թուրք չէ հա-
մարձակած իր անձը վտանգի դնել,
պզտիկ ցոյց մը ընել: Այն թուրքի
կտորները թէեւ ազատամիտ թուրք
դասակարգի մը գոյութիւնը տե-
սականօրէն ապացուցին, բայց
գործնականին մէջ ջուրի պղպշակի
չափ գոնէ անոր ուժ մը չը ներ-
կայացնեն ալ հաստատեցին: Որով
հետեւ եթէ այդ դասակարգը
զաղափարի ուժովը պատրաստուած
ու կազմակերպուած ըլլար, իր գո-
յութիւնը ցոյց տուող հրատարա-
կութիւններու հետեւանօք՝ ի գործ
դրուած հալածանքը բաւական
էր զիրենք իրենց կենպէն դուրս
պոռթկացնելու քանի քանի ա.

ռիթմերու մէջ, մանաւանդ սա-
վերջին հալածանքներուն առթիւ,
երբ անդին Բարիզի մէջ ալ, Հա-
մաժողովը կը գումարուէր երկու
կայսերազուններու նախաձեռնու-
թեամբ: Բայց այդ առիթն ալ
պարագայ անցաւ, որ կը նշանակէ
թէ երիտասարդ թուրքերը դրա-
կան ոչ մէկ ուժ չեն ներկայա-
ցընէր, որովհետեւ ազատութեան,
արդարութեան գաղափարով չեն
վառուած, համոզումով չեն զին-
ուած. անոնք ինչ տեսակէտներ որ
ալ ներկայացնեն թուրքի վրայ,
իրենց մտքին մէջ ուրիշ տարբեր
տեսակէտ մը ունին, աշխարհի վա-
յելքէն չը գրկել իրենց անձը: Սհա-
այս է իրենց հաւատոյ հանգա-
նակը, որ չը թողուր անոնց բա-
րոյական ու վերացական տարբեր
գաղափարներու համար ինքզինք-
նին կաթիլ մը արիւն զոհելու
վտանգին ենթարկելու: Հարէմական
կեանքի անձնատուր թուրք մտա-
ւորականը, տարվանքներու հետա-
մուտ թուրք ուսանողը եթէ եր-
բեմն գաղափարականի հովեր առնէ
իսկ, վստահ եղէք թէ միայն ժա-
մանցի համար են անոր արտասա-
նած աղբի, հայրենիքի կիսկտուր
խօսքերը: Իսկ խաժամուժ թուրք
ամբողջը իր մէջէն թէեւ շատ յան-
դուգն դէմքեր արտադրած է ու
կարտադրէ, բայց սա պայմանաւ
որ խնդիրը դառնայ անձնական
սոսիսի կամ սիրային նախանձորդի
մը և կամ դաւանութի և առեւան-
գումի վրայ: Ուսումնասիրեցէք
Օսմ. պատմութիւնը, ուր թէեւ
շատ մը քաջագործութիւններու ու
փայլուն յաղթանակներու պիտի
հանդիպիք. բայց կը տեսնենք թէ
հոն թուրք զինուորը յառաջ կը
խիզախէ միմիայն յաղթուողին
ինչքը յափշտակելու և ընտանիքը
անարգել կարենալ լլկելու տենչով:
Իսկ այդ վայրենական տենչանքն
գլխաւորապէս իրենց ներշնչողները
մահմետական կրօնքին վարդա-
պետները եղած են. ասոնք իրենց
հետեւողներուն երեւակայութիւնը
ու միտքը աշխարհիկ և յաւիտենա-
կան ցոփ կեանքի մը հրապոյրովը
կը վառեն միայն: Վերջապէս թուր-
քը կապրի իր անասնական կիր-
քերուն գոհացումին համար, կը

կուր յափշտակութեան և կրկին
նոյն գոհացման համար և կը մեռ-
նի նոյնպէս քառանակ մը ճիշդի-
ներու յաւերժօրէն գոհանքը վա-
յելու հրապոյրով վառուած. ասկէ
անդին ոչ գաղափար կայ անոնց
համար և ոչ նպատակ: Եթէ տար-
բեր կերպով ինքզինքնին ծախել
ուզեն մի՛ հաւատաք. եթէ հաւա-
տաք՝ 90 0/0 խաբուած էք:

ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

ՀՆՁԱԿԵԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ (*)

Ահա ուր խոսքերու կը հա-
ղորդենք Հայ հասարակութեան թէ
Հին և Վերակազմեալ Հնչակեան
երկու հատուածներուն մէջ, Մի-
ութեան բոլոր պայմաններուն վրայ
վերջնական համաձայնութիւն գո-
յացած ըլլալով՝ Հնչակեան Միու-
թիւնը կատարուած է:

Միացեալ ու միակ Հնչակեան
կուսակցութեան կեդրոնական
վարչութիւնը պիտի կազմուի ան-
յապաղ ամբողջ կուսակցութեան
քուէովը:

Երկար բանահյուսութիւններէ,
բուռն ու վճռական ճիգերէ վերջ
փոխադարձ զիջումներով ու զոհո-
ղութիւններով ձեռք բերուած այս
առաջին յաղթութիւնը՝ ոչ միայն
կը սրտապնդէ մեզ այն կողմու-
րիչ հաստատումով, թէ Հնչակեան
բոլոր հին և նոր ըկեղները կ'եղ-
բայրանան, կը համախմբուին
գարձեալ, և առ յաւէտ, իրենց
պաշտելի գրօշակին տակ, այլ
նաեւ իրաւունք կուտայ մեզ հաւ-
տալու, թէ՛ ինչ որ ալ ըլլան թիւ-
րիմացութիւնները, անձուկ մտա-
հոգութիւնները, անգիտակից ա-
տելութիւններն ու դժբաղդ, ար-
մատացած ուժացումները՝ ուշ կամ
կանուխ կարելի պիտի ըլլայ իրա-
գործել Հայ յեղափոխական ամ-
բողջական եղբայրութիւնը:

Հնչակեան կուսակցութիւնը՝ ինք
իր մէջ միացած պիտի շարունակէ

պահել՝ Հայ յեղափոխական միա-
ցած անշատ ուժերուն միատարր
ձուլումին հետապնդելու՝ և զայն
ամէն կերպով դիւրացնելու իր
բովանդակ անվերապահ կամաւո-
րութիւնը: Ու միեւնոյն ատեն ա-
ւելի քան երբեք անվատ համա-
ռութեամբ, պիտի ձգտի ամբողջ
Հայ ժողովրդին փրկարար համե-
րաշխութիւնը իրականացնել՝ Հայ
Յեղափոխական Գործին շուրջը:

Այլ եւս «Հին» և «Վերակազմ-
եալ» յարանուանութեամբ ուրոյն
Հնչակեան հատուածներ գոյու-
թիւն ունենալէ դադրելով՝ վեր-
ջնական կեդր. վարչութիւնը
անհրաժեշտ համարեց հետեւեալ
նամակն ուղղել Հ. Յ. Դաշնակցու-
թեան Արեւմտեան Բիւրօին:

Լոնտոն 1 Ապրիլ 1902
Հ. Յ. Դաշնակցութեան
Արեւմտեան Բիւրօին,
Ժընէվ

Յարգելի Հայրենակիցներ,
Ուրախութեամբ կիմացնենք Ձեզ
որ Հին և Վերակազմեալ Հնչակեան
երկու հատուածներուն միջու միու-
թեան բոլոր պայմաններուն վրայ
վերջնական համաձայնութիւն գո-
յացած է:

Կարելի եղածին չափ շուտ,
ամբողջ կուսակցութեան քուէով,
պիտի ընտրուի միացեալ ու միակ
Հնչակեան կուսակցութեան կեդր. վարչութիւնը, որ պաշտօնապէս
պիտի հաղորդէ ձեզ իր կազմա-
կերպութիւնը և որուն հետ է որ
պիտի կրնաք այլեւս ուղղակի բա-
նակցութեան մտնել՝ Միութեան
մասին, երբ ժամանակը հասած
նկատէք:

Սիրելի է մեզ յուսալ որ մինչև
միացեալ ու միակ Հնչակեան կեդ-
րոնին կազմութիւնը, ի վիճակի
կըլլաք ուղղակի բանակցութեանց
ձեռնարկելու, որով կարելի կըլ-
լայ վճռական քաջ առնել գէպի
Հայ յեղափոխական ուժերու ամ-
բողջական, բաղձալի միացումը:

Ընդունեցէք մեր յարգանքները
Հնչակ. կուս. կեդր. վարչ. կողմէն՝
Ատենաղպիր Ատենապետ
Usnragruphik Usnragruphik
(Կնիք)

(*) Արտատպուած Նոր-Կենտրոն:

ՎԼԱՍԱԿ ԹԵ ԻՄԱՍՏԱԿ

Ինչպէ՞ս խօսիլ յօգուածագիր Վլասակի մը, վասակապատ յօգուածագիր մը հետ, որու անունն իսկ կը մատնէ թէ՛ ինք ինչ նկարագրի մարդ է, եւ որը Իրաւունքի մէջ «Մի խաբուիք» խորագրով եւ զտղթական ստորագրութեամբ գրուած յօդուած մը հերքելու համար, Շուշիայի թաղականութիւնը առանց բացառութեան «անատակ տղէտ» անուանելէ, գործող մեղուաջան տիկին խնամակալու հինները խածնելէ յետոյ, կուգայ իր աստամբու սրտի թիւնը իմ անգամներու վրայ ալ փորձել:

Իմաստակներ ամեն տեղ ալ կը գրտնուին. բայց սիրելի ընթերցող մի զարմանար՝ եթէ ըսեմ, Շուշիայի իմաստակները գերազանցագոյնն են:

Ըստ Պ. Վասակի յայտարարութեան, Շուշիայի Պատ. թաղական խորհուրդը պաշտօնագրի մը իմաստը չըմբռներ, կը կարծէ՛ք թէ Կեդրոնական Ուսումնական Խորհուրդն եւս իրեն մատուցուած վկայականներու եւ պաշտօնագրերու իմաստը չըմբռներ... Պ. Վասակը այդ մասին բան մը չըսեր, միայն անարժէք կը նկատէ, անգլային վարժարաններու մէջ պաշտօն վարելու կարող ըլլալու հաստատող Ուսումնական Խորհուրդի տուած ուսուցչութեան վկայականը, եւ չոր նախանձե ու ցինքական բնազդներէ մղուած կը բացազանչէ. չըլլար չի կրնար... Մենք չենք գիտեր թէ պարտէզիկներու այդ սրգանքով իմաստակը ի՞նչ բանի վրայ հիմնուած այդ բացազանչութիւնները կրնէ, արդեօք իր խելագատակէն կրթական ուր օրէնքներ հանելով, ընդունել պիտի տայ Կեդրոնական Ուսումնական Խորհուրդին, թէ միտքի զրամ է ինձ նկատմամբ մի վասակական դաւադրութիւն սարքել: Այս վերջինը կարելի է յուսալ, բայց առաջինի մասին, այսինքն Ուսումնական խորհուրդին կրթական օրէնքներ սորվեցընելու աւելորդ ձանձրութիւն թող յանձն չառնէ: Ինչքէ է իր ազիտութեան եւ...:

Ո՞վ չի գիտեր որ Ուսումնական Խորհուրդը, որ եւ է ուսուցչի վկայական տալու համար, որոշ քննութիւններ կը կատարէ, մանաւանդ

ներկայ պարագաներու մէջ, երբ առարկութիւններ կան, գիտողութիւններ կը ըլլան, կարգ մը երկդմի եւ ծոյ ուսուցչներու ձեռքէն վկայագիրները ետ առնելու:

Ո՞վ չի գիտեր որ Ուսումնական Խորհուրդը նախ կարգ մը վկայականներ ի նկատի կ'առնէ ու յետոյ ուսուցչի պաշտօնական վկայական կուտայ այս կամ այն անհատին: Ընկալականութիւններ, որոնց սովորքն ալ կատարուեցան մեր կողմէն: Նախ ուղարկեցի ձեռքս ունեցած Կեդրոնական վարժարանէն ստացած վկայական, որն եւ թէ օրինաւոր չըլլար, Ուսումնական Խորհուրդը նոյնիսկ Գրդ. օգնական ուսուցչի վկայական ալ չէր կրնար տալ. երկրորդ իբրեւ փորձառութեան երաշխիք՝ նոյնպէս ուղարկեցի Ռուս. ճւղ. երկու տարի, իբրեւ Տնօրէն-դատաւար, արդի նախ պաշտօնավարութեան համար ստացած վկայական: Բացի այս ամէնէն հաստատեցի նաեւ որ իբրեւ ուսանող, երկու տարի ալ ժընէվ մնալով, հետեւեւեւ եմ համարուած բնական գիտութիւններու դասընթացներուն, բան մը որ եթէ ուղէ, Պ. Վասակն անձամբ պիտի կրնայ հաստատել, բաւական է որ 1900 տարու ժընէվի հաւաքարանի աշակերտներու անունները՝ որոնք ապագայում են մասնաւոր պրօֆէսորներու մէջ աշխատեցին, այն տեղ բնական գիտութիւններու շարքին մէջ պիտի գտնէ նաեւ Ասլան Տօնիկեան (Հայ եւ Հայաստանցի) անունը: Միայն թէ այսքան անհրաժեշտ կը համարեմ ըսել, որ ցարդ հակառակ Պ. Վասակի յայտարարութեան ոչ մի պարագայի մէջ, ո՛չ մի տեղ, իբրեւ համալսարանական չեմ պարծնեցած: Պ. Վասակ կատարեալ ստախոս մըն է ու չարաչար կը սխալի կարծելով որ ուրիշներն ալ իրեն նման ինքնագովներ կամ իմաստականներ են:

Կը յուսանք որ այս բացատրութիւնները կը հանգարեցնեն խելագորոյս եւ «թանչէ թելագորուած» Պ. յօդուածագիրը Վասակը, մեր Վասակ յօդուածագիրը, այնպէս որ եթէ իրօք կրթական տեսակետներէ առաջնորդուած մեզ քննադատել ելած է, ալ ասկէ վերջը կրնայ իր երկու ականջներուն վրայ հանդարտիկ ու մուշ մուշ քննալ, վստահ ըլլալով որ Շուշիայի ուսուցչական խմբի ներկայ

յացողի Ասլան Տօնիկեան թէեւ բոլոր ֆէսէօր չէ, բայց Կեդրոնական Ուսումնական Խորհուրդէն վկայեալ ուսուցչի մըն է, եւ նախալրիւստ վարժարան մը կատարելու չափ փորձառութիւն ունի. իսկ Շուշիայիք եւ թէ կուզեն ասկէ վերջ վկայալ բոլոր ֆէսէօրներ ունենալ, փառք տուողին եթէ փոքուի այդ ալ կը գտնուի Պոլիկարի մէջ, միայն թէ կարծեցեալ բոլոր ֆէսէօրներ ընտրելու ժամանակ տեղափոխելով, — նոյնիսկ կրթական տեսչի միջոցով — անգլային վարժարաններէ արտաքուստ վկայեալ խաչագործներ չընտրեն:

Ա.—Լն

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ապրանքաւոր ռուս լախարարը

Ռուսիոյ ներքին գործոց նախարար Ս. Սիբիրսկիի պաշտօնագրին բուն անունը Մարիչէվ է: Սա վերջին խոսքով խոստացած ուսանողներէ մին էր, թէեւ բանտարկութեան ալ դատաւարտուած էր բայց կարճ ժամանակի մը մէջ այդ պատիւէն ազատեցաւ:

Կը խոսուի թէ Մարիչէվը նախարարին թուղթ մը ներկայացուցած է, եւ անոր այդ թուղթը կարգաւոր միջոցին «վերջին վարկեանց հնչեց» րսած ու վեցհարածնաւով երկու անգամ կրակ ըրած է նախարարի վրայ: Սա անմիջապէս անշուշտ է: Նախարարին պաշտօնագրութեան համար անոր մօտէն հսկող սպասաւորը եւս երրորդ գնդակով մը վիրաւորուած է: Նախարարին դէմ գողտուութիւնը արդէն աճած էր, քանի մը անգամ մահ սպառնացող նախակներ ստացաւ: ասոր համար իր շուրջը խիստ հսկողութիւն ընել կուտար, սակայն ապարդիւն եղաւ:

Ձարը, Ձարուհի, մեծ գոլքերը, նախարարները, դեսպաններ եւ այլն յուզարկուեցան ներկայ գտնուեցան:

Անյախիկի վախի ճառը

Մէլանիկի նոր վալի կարգաւոր Հասան Ֆէհմի փաշայի իր պաշտօնա-

վարը հասնելուն արտասանած մէկ ճառը՝ որ Մակիդոնիոյ արդի կացութեան տեսակետով իր կարեւորութիւնը ունի, Թանի թղթակիցը հետեւեալ կերպով ամփոփած է:

«Մեր վեհապետին պատուէրները մեր վրայ պարտք կը դնեն ամէն ջանք գործադրել պաշտպանելու համար բոլոր բնակչաց՝ առանց բացառութեան օտարահայտականներու, կենսքը եւ ինչքը, նաեւ անոնց բարեբաստութեան համար անգործութիւնը ապահովել: Այս արդիւնքը ձեռք բերելու միջոցներ մեզ չեն պակսիր, այդ միջոցները արդէն պատրաստուած են: Մենք ունինք պէտք եղածին չափ զինուորներ, ոստիկաններ, եւ հսկողութեան պաշտօնականներ երկրին մէջ կարգաւորութիւնը եւ անգործութիւնը պահպանելու համար: Այս նպատակով եւ ամէն ջանք ի գործ պիտի դնեմ եւ Աստուծոյ ողորմութեամբ ու բանակին օգնութեամբ պիտի յաջողիմ:

Իմ մասին, ես եւ ոչ մէկ միջոցի մէջ չը պիտի թերանամ եւ կասկած չունիմ որ իմ հետ գտնուող պաշտօնականները նոյն չընեն: Նոյնպէս զինուորները եւ անոնց հրամանատարները իրենց պարտք պիտի կատարեն: Հանրային կարգը խանգարողները քաղաքակրթութեան հետ մարդկութեան թշնամիներ են: Կառավարութեան կը պատկանի զանոնք ճշդել: Ահա այս է որ ես պիտի ընեմ պաշտօնականներով եւ զինուորներով: Ըստ որում ժողովուրդը հանգիստ կրնայ լինիլ: Ամեն անոնք որ կարգին պահպանմանը կաշակցին իմ աջակցութեամբ պիտի ստանան: Բայց անոնք որ խաղաղութիւնը կը վրդովեն պիտի պատժուին իբրեւ քաղաքակրթութեան թշնամիներ:

«Երկրին բարեւոք ծառայութիւն մատուցանողները վեհապետին վարձատրութեանը պիտի արժանանան: Բայց անգաղար պիտի հալածեմ, պիտի պատժեմ գէշ նպատակներ ունեցող մարդիկը: Մեր վեհապետին մտադրութեանց սրբութեանը վրայ վստահ եմ:» Ուստի բոլոր ճիշտ ի գործ պիտի դնեմ խաղաղեցնելու համար երկրը եւ ժողովուրդը, որուն հայրն ամ իբրեւ ներկայացուցիչ վեհապետին, Բարեւ հայր մը կը սրբէ եւ կը պատժէ իր գաւակները անոնց գործելուն համեմատ: անա իմ ալ ընելիքս

Ա. ԵՐԵՄՅԱՆԵԱՆ (10)

ԹԻԱՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԻՐՈ ԱՐՊԱՐ

Ռէս Մէլք հիւրերը պատրաստ մինտարներուն վրայ նստեցուց: Միւր արկար բոլոր մարմնով կը գողգողար:

Քիչ յետոյ Լալեզար ներս մտաւ:

— Աղջիկս... բացազանչեց ծերունին՝ խելի մը պէս Լալեզարին վզէն փաթկեց:

— Հայր իմ... միմիջեղ մանկամարդ աղջիկը՝ գրեթէ չկրնալով իր ճիշդ զսպել:

Ու երկու կարօտցած հոգիներն, իրարու վարած, իրարու գրկին մէջ սեղմուած, կը թափէին իրենց արցունքները եւ իրենց զառնութիւնները...

Մերունին իր կարօտը չէր կրնար առնել...

— Աստղիկ, Աստղիկ... կը հառաչէր Միւր արկար... անոնց ուրիշ բան մը արտայայտուի:

— Տեսա՞ք, Միւր արկար, Աստուած ինչպէ՞ս ձեր ձայնը լսեց, նկատել տուաւ Ռէս Մէլքի:

— Այո՛, վերն՝ Աստուած ու վարը՝ հրեշտակ մը կայ ինձի համար քննէ զատ, հայր իմ, ըսաւ Լալեզար իր հորը՝ անաւատիկ:

Ու վանականին ձեռքը բռնելով համբուրել ուղղեց:

— Ինչ կրնես, Լալեզար, կուզե՞ս վշտացնել զիս, առարկեց վանականը՝ ձեռքը քաշելով: Գիտցիր որ ես եւրախապարտ եմ քեզի, որովհետեւ իմ քայլերուս առաջնորդիցիր եւ սիրտ տուիր ինձի՝ իմ նպատակս իրագործելու համար:

Պէտք է գիտնանք որ Լալեզար մինչեւ այդ պահուն վանականին հայ ըլլալը չէր գիտեր:

— Ի՞նչ երախտապարտ ըլլա՞ք ինձի... ինչո՞ւ համար, Ալի-Պէ՛կ, ինչ ըրի, ընդհանրեց Լալեզար: Ձեր քայլերուն ե՞րբ առաջնորդեցի: Մինչդեռ

դուք իմ կեանքս շաղատեցի՞ք: Դուք այն հրէշին ձեռքէն չլսեցի՞ք...

— Ո՛հ, Լալեզար, միմիջեղ վանականը, ներքէ՛ որ ըսեմ քեզի թէ ես հայ եմ...

Ու այս անգամ հայերէն լիզուով խօսեցաւ:

— Աստուած իմ... բացազանչեց Լալեզար, ո՛հ, որչափ երջանիկ եմ որ դուք հայ էք եւ իմ արեւնս կը կրէք:

Մանկամարդ աղջիկը զանաւոր արցունքներով ողորկեց իր կարօտցած հօրն ու աշխարհքիս մէջ ամենէն սիրելի, ամենէն պաշտելի ձեռքերը...

Գիշերուան ժամը վեցի ատեններ Միւր արկար ու Լալեզար միկիեցան:

Օր մը վերջը՝ վանականն ալ միկեցաւ:

ԵՐԿՐԻ ԼՐՏԵՍՆԵՐ

Ա... գեղին մէջ, ինչպէս բռնեք, շատեր իմացած իսկ էին Լալեզարին ներկայութիւնը: հետեւաբար անոր բացակայ գտնուիլ կասկած մը չէր կրնար ըլլալ Ռէս Մէլքի համար:

Միայն թէ՛ Գլիւր Չաքոն էր որ ամեն բանէ տեղեակ էր իր անդադար կատարած քննութեանց շնորհիւ: հետեւաբար այդ աղետաւոր մարդն էր որ պատեւ առիթի մը կը սպասէր՝ իր հոգեւոյն բովանդակ տեսութիւնը ցոյց տալու համար:

Եւ որովհետեւ գոռո՛ւ ու չահամու էր, այդ պատճառաւ կը վախնար նենգաւոր միջոցներու գիմարէ: Աւելի՛ քան ստոր տարիներէ ի վեր իր պաշտօնին մէջ հաստատուած ըլլալով, Ռէս Մէլքի շնորհիւ հանգիստ կերպով իր ընտանեաց ապրուստը կը հայթայթէր: Թէեւ իր ընթացքը, իր վատ բնաւորութիւնը, իր նկարագիրը բոլոր գեղացիներուն անտանելի դարձած էին, սակայն Ռէս Մէլքին սիրոյն համար ո՛չ մէկը ձայն կը բարձրացնէր, ո՛չ մէկը գանգատ մը կուզէր յայտնել:

Գլիւր Չաքոն ապերախ գազան մըն էր որ իր տիրոջ հացը կուտէր, անոր բարեբանութիւնը կը սնանէր, եւ սակայն կուզէր անոր անարին ետեւ թաքնուիլ, անոր քուն եղած ատեն անկողնին մօտենալ ու խղճել զանի:

Ինչու համար...

այս է սա երկրի ժողովուրդին հա-
մար»

Բարիկի քուրճ ուսանողները

Թուրք ուսանողներու խնդիրը դեռ
չը վերջացաւ, անոնք դեռ իրենց ամ-
սականին կը սպասեն եւ այնպէս կը
կարծեն անոնցմէ ունենալ թէ դեռ շատ
երկար ժամանակ ալ սպասելու են,
վասնզի հակառակ դեպքանաւոր կամ
աւելի ճիշդ դեպքանաւոր ըրած խոստու-
մին, մինչեւ օրս, ամսական սպա-
սողներէն եւ ոչ մին իր ամսականը
ընդունել է: Հրաշալի պիտի թիւն
եւ հրաշագոյն դեպքանաւորներ...:

Կառավարութիւնը ետ կը կանչէ
թուրք ուսանողները, ըսե՛նք կամ
ենթացրե՛նք թէ այդ իր իրաւունքն
է... Բայց դեպքանաւոր թուրք չը տար
նոյն այդ թուրք ուսանողներուն Պո-
լիս վերադառնալու, այս ալ դեպքա-
նաւոր իրաւունքն է: Եթէ կրնաք
բան հասկնալ հասկցէք այս եղբերգա-
կան-կատակերգական տրամէն:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը գնահատելով Օրման-
եան պատրիարքի իրեն մատուցած
ծառայութիւնները Ա. կարգի ու-
կանակուռ Օսմանիէ պատուանշան
մը տուած է անոր. որպէս զի հայ
ազգին իրաւունքները ալ աւելի
երկար ըմբռնողքին ծառայե-
ցընէ և անտեղի ու շողոքորթ ու
զերծներու տեղատարափով մը
Բատիշահին «քէֆ»ը բերէ:

— Սուլթանը ըստ սովորականին
25000 զւշի նպաստ մը ըրած է
յանուն որբերու և կարօտեալնե-
րու:

Այս նպաստին ու պատուանշա-
նին համար Օրմանեան փութա-
ցած է Պալատ երախտագիտական
երկու նոր ուղբձներ մատուցանելու
Սուլթանին:

— Սակայն այս անգամ միայն
Պատրիարքը չէ որ պատուանշանի
արժանացած է, այլ գաւառներու

Անոր համար որ չէր ուզեր բաղդա-
ւոր մարդիկ տեսնել եւ չէր ուզեր իր-
մէն աւելի երջանիկներու վրայ նա-
խի... այլ կը փափաքէր որ քաղած
տեղը, մտած վայրը, ամեն կողմ եւ
ամեն ուրեք թշուառութիւն ու ար-
ցունքներ պատկերուէին իր աչքին ա-
ռաջը:

Այս էր այդ մարդուն հոգեկան
քստմնելի դրութիւնը:
Գիտէր թէ Լալեղար ու հայրը դէպի
ո՛ր կողմը խրկուած էին: Միեւնոյն
ատեն՝ լսած էր թէ կառավարութիւնը
կը փնտռէր այդ ազգիկն, իբրեւ ոճ-
րագործ մը: Կասկածելու պէտքը փա-
րատած էր իրեն համար: Բայց ստիպ-
ուած էր համբերել...:

Գիշեր մը արտոնին մշակը ձայն
առաւ իրեն եւ իմացուց թէ երկու
թուրքեր եկած էին եւ կուղէին Ռէս
Մէլիքը տեսնել:

Գիշեր Չաքոն անմիջապէս դուռը բա-
ցաւ:

Արդարեւ գուռին առաջը երկու ձիա-
ւոր թուրքեր կը սպասէին, որոնց մին
Մօլլա մըն էր, իսկ միւսը՝ մաքուր
հագուած քաղաքացի մը:

Անձանթ մարդիկ՝ բարեւելէ յե-

հետեւեալ առաջնորդներն ալ այդ
չիք փառքին տիրացած են:

Տէր Յակոբ Եպօ. Սամսի

» Եղիշէ վրդ. Էփէրի

» Փառէն » Սրբէրտի

» Կորիւն » Չարանճաքի

» Սկրտիչ » Քէօթահայի

» Արսէն » (Կաթողփոխ)

Ազիւսմարայ

Ասոնք ամենն ալ Մէճիտէէի
Գ. կարգը ստացած են: Այս պատ-
ուանշանները թէեւ անարժէք,
բայց կը տրուին իբր «լուծիան»
վարձը. որպէս զի անոնք իրենց
հովուութեան լանձնուած հոյ ժո-
ղովուրդին տոռապագին վիճակը
չը պարզեն աշխարհի առջեւ:

— Չմիւսիս ազգային հի-
ւանդանոցին 400 ամեայ յորի
եանը նախընթաց կիրակի, որ 31
Մարտ, տեղի ունէցաւ ընդ նոյնա-
գահութեամբ Տ. Սրբիքսեղէկ
սրբաշանին և ի ներկայութեան
700է աւելի հոգեւորականներու,
Բայց սպասուածին չափ արդիւնք
չէ գոյացած. ծախքերէ դուրս
միայն 350 ոսկոյ զուտ շահ մը
արտադրուած է:

— Մասին լրագրոյ արտօնաւոր
յով Տ. կարապետ իւլիսիանի
յիսնամեայ Թորիլիանը կատարել
առաջարկուած ըլլալով կարգ մը
գրասէր անձերու կողմէ, Պօլսոյ
Ազգ. Բաղաք. Ժողովը արտօնած
է կատարումը. և գործադրու-
թիւնը յանձնարարած է առա-
ջարկը ներկայացնողներուն:

— Պօլսոյ մէջ հարկւաւոր ազ-
գայիններ Ս. Չատիկ տօնին առ-
թիւ միմեանց ալցելութենէ զերծ
մնալու համար ի նպաստ հիւան-
դանոցին մասնաւոր գումարներ
տուած են: Փափաքողը հոս եւս
նոյնը կրնան ընել և Ուրախամին
բաժին մը հանել Ս. Չատիկ առ-
թիւ: Իսկ մենք պատրաստ եմք
իրենց անունները ու նուէրները

տոյ, յայտնեցին իրենց նպատակը
թէ՛ միայն տեսակցութիւն մը պիտի
ընէին Ռէս Մէլիքին հետ ու պիտի
մեկնէին:

— Այս պահուս... բացառաւոր
Գիշերը՝ ընդունին զարմացած:

— Այո՛, որովհետեւ ժամանակ չու-
նէք, առարկեցին երկու անձանթ-
ները:

— Երկու ժամ մնացեր է լուսնալուս-
քիչ մը հանգստացէ՛ք, վաղը կեր-
թաք, ընդհատեց Գիշեր Չաքոն, որ
շողոքորդելու մէջ վարպետ էր բառին
բովանդակ նշանակութեամբ:

— Թո՛ղ ատանկ ըլլա՛յ... ըսաւ գի-
րուկ եւ ծաղկաւեր դէմքով Մօլլան:
Թէեւ ուշ կը մնանք, բայց վնաս չունի:
Ձեր խօսքը չենք կոտորեր: Մանաւանդ
որ Ռէս Մէլիքը քնացած ըլլալով,
անհանգիստ պիտի ընենք զինքը:

Այս խօսքերէն ետքը, ձիերը թող
տունին որ արտօն տարուին. իսկ ի-
րենք, Գիշերին առաջնորդութեամբ
թառման ելան:

— Ի՞նչ է ձեր անունը, հարցուց
մեծափոր Մօլլան մտերմական կեղծ
ձայնով մը:

— Չաքո՛, պատասխանեց Գիշերը:

չարաթ օրուան թիւով հրատարա-
կելու:

— Եղիսիայէ գրած են թէ
Հռոմկայի մօտ գտնուող Ճիպին
գիւղի մէջ ասկէ առաջ գաւառա-
փոխութեան գիւղով մի քանի տուն
ազգայինները սկսած են իրենց
մայրենի եկեղեցւոյ գիւղը վերա-
դառնալ. որովհետեւ վերջերս ա-
նոնց հոգեւոր պէտքը հոգացնող
քահանայ մը գրկուել է:

— Շնորհակալութեամբ ստա-
ցանք վենետիկի Ս. Ղազարու
փառքին մէջ հրատարակուող Գե-
ղունի պատկերազարդ հանդէսին
Գ. թիւն ալ, որուն գրական պա-
րունակութենէն աւելի պատկեր
ները հետաքրքրական են:

ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆ

ԺԻՅՈՒՑԱԿ

Պօռնաշանէն

Տ.Տ. Մանուկ Խ. Մանիա 20 ֆր.
Տիկին Մարիամ Կոյալեան 10. Տիկ.
Աննա Կոյալեան 10. Տիար Սալի
Գաբրի 10. Գէորգ Պըրքլեան 10.
Արքայազն Պըրքլեան 4. Ժէլի Արթի-
նովիչ 10. Մարիա Միսիր 5. Չ. Խ.
Մանեա 10. Պօլֆօսեան 5. Սիմօն
Խ. Մանուկեան 5. Կարապետ Չա-
մբեան 5. Սիւսէն Մարիա 5. Յով-
հաննէս Կարապետեան (հաղարարպետ) 5.
Մ. Պօկտանովիչ Չէրքէզ 5. Տիկ. Ան-
նա Թուման Կէորգեան 3. Տօքթօր
Կոյալ 2. Խաչիկ Ղազարեան 5.
Տիգրան Խ. Պապանիկեան 5. Աբրա-
համ Ռաշատուրեան 5. Խաչիկ Պ.
Մանեա 10. Պատ. Հոգաբարձութիւն
Ս. Եկեղեցւոյ 51:

Պօթու անէն հաւաքուած 200 ֆր.

ԺԵՅՈՒՑԱԿ

Պոռնաշանէն

Տ.Տ. Փիլիպոս Մարգարեան 1. ֆր.
Յովհաննէս Պաքաճեան 10. Նաչիտ
Նիկողոսեան 1. Կարապետ Մեկիքեան 2
Գէորգ Աղաման 4. Անդրէաս Թով-

— Այս տունին մէջ ի՞նչ պաշտօն
ունիք:

— Գիշերը գիշերն եմ, Մօլլա է-
ֆէնտի:

— Վա՛յ... ըսել է թէ Ռէս Մէլիքին
գործակատար Չաքոն դո՛ւք էք:

— Այո՛:

— Ինչպէ՛ս... գոնէ՛ վիճակէ՞ք գո՞հ
էք:

— Ի՛նչ... ի՞նչ ըսեմ... հարկաւ գոհ
պիտի ըլլամ:

— Ռէս Մէլիք բարի մարդ մըն է...
կը յուսամ թէ ամեն կերպով կը վար-
ձատրէ ձեզի, անանկ չէ՞:

— Այնպէ՛ս է... բայց ես ալ չարա-
չար կաշխատիմ: Աստուած գիտէ քա-
շաներս խօսք հասկցող սա գեղացի-
ներու ձեռքէն: Ամեն օր, առտու ընէ
մինչ իրիկուն, շա՛ն մը պէս ոտքի
վրայ հո՛ս կը վազեմ, հո՛ն կը մտնեմ,
մէկուն անուշութեամբ կըսեմ, միւ-
սին բարկութիւն կը ցուցնեմ, հոգի
կը հասցունեմ, թուր ու մուր կու-
տեմ... միայն ապրուստի մը համար:

— Իրա՛ւ է... ընդհատեց Մօլլային
ընկերացող մարդը, որ մինչեւ այն
ատեն լուռ կը կենար: Ես գիտեմ թէ
Գիշերին պաշտօնը շատ ծանր ու շատ

մասեան 2. Արտաշէս Գրիգորեան 2.
Խաչիկ Բիլաֆեան 4. Խաչիկ Մա-
նուկեան 10. Յարութիւն Էգնայան 5.
Յովհաննէս Ճանիկեան 2. Միքայէլ
Բացախեան 5. Յովհաննէս Սրապեան
5. Գաբրիէլ Գուրմաճեան 2. Կարա-
պետ Շաքարճեան 1. Եղարթ Միքի-
ճանեան 4. Կարապետ Անտօնեան 2.
Գաբրիէլ Նիկողոսեան 2. Խաչիկ Պաղ-
տատեան 1. Սարգիս Բարսեղեան 4.
Ռաշատուր Աւագեան 1. Մանուկ Տ.
Մարկոսեան 1. Գրիգոր Իսկէնտէր-
եան 5. Նշան Յարութիւնեան 1. Ժի-
վան Կարապետեան 2. Կարապետ Յով-
հաննէսեան 1.25 Տիգրան Պէշիքեան
2. Փիլիպոս Փափազեան 2. Յովհան-
նէս Պոտտիկեան 5. Յովհաննէս Մար-
տիկեան 5. Յակոբ Կարապետեան 2.
Միսաք Գրիգորեան 1. Եփրեմ Կարա-
պետեան 1. Գրիգոր Կէորգեան 1.
Եղարթ Տէր Մարկոսեան 5. Չատիկ
Մուրադեան 5. Սարգիս Չաքարեան
3. Արամ Տ. Պատրոսեան 1. Յովհան-
նէս Կարապետեան 2. Համբարձում
Աւագեղեան 1. Աբրահամ Պաճեան
2. Անդրանիկ Կէշեան 2. Յովհաննէս
Կայմալեան 1. Գրիգոր Պաճիկեան 1.
Էւստ Զայրիկեան 3. Թագ. որ Ասա-
տուրեան 1. Յակոբ Պապեան 5.
Ղազարոս Ավճեան 5. Ստեփան Կա-
րապետեան 1. Նաչի Կոյալեան 3.
Ասկան Մկրտիչեան 2. Յակոբ Չարք-
ճեան 1. Յովհաննէս Կամպարապետ 1:

(Մնացածը յաջորդով)

ԻՐԱՆԻՆԻՔԻ ՎԱՏԱՍԻՍԱՆՆԵՐԸ

Տ.Մ.Պ. Վանա. — Ձեր մէկ մէճի-
տից նուէրը Ս.Սահակայ չըրմին կա-
ռուցման ի նպաստ, ուղղակի Պատ-
րիարքարան շնորհեցէք:

— Տ. Կ. Մարութեան Ֆիլիպոսիկ. —
Ստացանք 141/2 ֆրանք: Փափաքելի
է որ Ամերիկայի մեր բոլոր բաժա-
նորդներն ալ ամբողջեան «էքսպրէս»
զրամատուէն տեղւոյ Պոլկար Ազգա-
յին պահապին վրայ քաշուած փոխա-
նակապով շնորհէին իրենց բաժնեգիւ-
ները, որոնք առանց զբաւի ու ժա-
մանակի կորուստի կը դանձուին հոս:
Ձեր ուզած գրքէն 7 հատ ծրարով
մը բոստրն յանձնեցինք:

ալ փափուկ պաշտօն մըն է: Ռէս մը
պարզապէս անուանական մեծաւոր մըն
է գեղերու մէջ. բայց Գիշերը բանիլթուն
եւ խորամանկ գործակատարն է որ ա-
մեն յարկի տակ, ամեն տեղ եւ ա-
մենուրեք կը մտնէ եւ ըստ այնմ կը
վարէ իր պաշտօնը:

— Եթէ աշխատութեանս չափ հան-
գիստ ապրէի, կ'մկմաց Գիշերը՝ գրեթէ
աղետաւոր վերապահութեամբ մը:

— Հանգիստ չէ՞ք, հարցուց Մօլ-
լան:

— Ի՞նչ հանգիստ պիտի ըլլամ...
մինակ չեմ, Մօլլա էֆէնտի, ընտա-
նիք ունիմ, զաւակներ ունիմ, որ-
քեւայրիք ունիմ, հիւանդ ու տա-
րիներով անկողնէն վեր չառած՝ մայր
մը ունիմ, վերջապէս այնքա՛ն ան-
տանելի է իմ դրութիւնս որ մտածե-
լով պիտի խենթեմ: Եթէ ընտանիք
չունենայի՝ ու այս վիճակին չգտա-
պտուէի, հաւատացէք որ վայր-
կեան մը չպիտի ուզէի հոս մնալ...:
Ախորին մշակներն ինչ հանգիստ կապ-
րին...:

(Շարունակելի)

ՐԵՃԱՎԷ ԻՆԹԵՐՆԱԿ

Տարածի սուրբ թաղի քեզ լինելու վե-
գըրարտա պուրնուպտե կազմած պե-
տէլինի կէտնտէրմէյէ միւսաստէլէրի
օլմայան պիր թագըմ ապօնէլէրիմի-
զին, Ս. Ջատիկ միւսաստիպէթի իլէ,
չէհրլէրէ կէլէճէլէրի մուհագգազ օլ-
տըղընտան, պու վասիթա իլէ պարի
կազմած բարասընը բօսթայա թէսլիմ
իթմէյէ ունու թմամալարը ղէճա օլու-
նուր:

Քէզա քիլիսէ վէ մէքթէպ խառնէմէ-
լէրին վէ մէմուրլարըն վէ իմալլըգտա
պուլընանլարըն այնի միւսաստիպէթի
իյֆայի տէյն իթմէլէրի մէրճու տըր:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ
ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

ԹԻԻՐԲԻՍ

Վիեննա տա կէզէն շայէալարա
պինան, Միս Սթօնը տաղա ա.
չըրմըլ օլան չէթէնին էճնէպի գօն.
սօլօսլարտան պիրինի տախի ա.
չըրմագ հաղըրլըղընտա պուլըն.
տըղընը Պապը Ալի պիւթիւն տէվ
լէթլէրէ ինթար իթմիլ, վէ Մա-
քէթնիտաքի գօնսօլարըն իհ-
թիյաթլը տապրանմալարը իչիւն
լաղըմ օլան թալիմաթըն վերիլմէ-
սինի տէվլէթլէրէ թափսիյէ էյլէ-
միլ տիր:

— Սթանպօլտան Ապրիլ 18 թա.
րիլի ալընան թէլէկրաֆա պի.
նաէն, Ֆիրմիլիանըն Սթիպէ մէթ-
րօրօլիտ թագտիս օլընմասը թէէ-
խիւր օլընմըլ տըր: Օրատա կէզէն
շայէաթա կէօրէ Բուսիա տախի
մէզքիւր իտտաաաաա վազ կէչէ-
ճէք իմիլ:

— Ֆրանսըզ թագաալարընտան
Լօրէնտօ վէ թիւպինի մաթլուպա-
թընա մահաուպէն՝ Սատրազմըն
էմրի իւզրէ՝ Տիւլունը Ռ.մուսթի-
տէն պիրէր թագսիթ էօտէնմիլ
տիր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Ֆէլսամ. Բրէնա Ֆէրտինանտ հազ-
րէթլէրի բաղար կիւնիւ շէհրի-
միզտէ պուլընուպ վէ քիլիսէ այնըն.
տան սօնրա ֆայլթօնլէ պիրազ կէ-
զինուպ, պիլ ախէրէ մէթրօրօլիտ.
լիք տախիսինէ թէչրիֆլէ պիր
միւստէթ Գեբը. Մէթրօրօլիտլէ
կէօրիւշտիլէր: Մէսմուլթա պի-
նաէն՝ եագընտա մախտուլարը իլէ
պէրապէր Էվսինօկրատ քէօլկիւնէ
թէչրիֆ իտէճէլէր իմիլ. պու
պապտա մէզքիւր սէրֆիյէտէ թէր-
թիպաթ իճրա օլընմագտա տըր:

— Պուլտան էվլէլ շէհրիմիլ պէ-
լէտիյէ գալէմինտէ քեաթիպ պու-
լընան կէօրիկ Տանչէֆ նամ կէնճ՝
Մաքէթնիտաքի միլլէթտալա-
րընըն սէֆալէթինէ պիր մուսաֆէ-
նէթ իտէպիլմէք մուգատտէս տույ.
կուսը իլէ, քէնտի մէվզը ու իս-
թիզպալըն ֆէտա իտէրէք, գօ-
միթալար շէթէսինէ տախիլ օլմուլ
վէ սօն կիւնլէրտէ թիւրք աքէր-
լէրի իլէ վուզու պիւլան պիր միւ-

սառնէմէտէ աղըրճա եարէլէնէրէք
վէֆաթ իթմիլ տիր:

Միւլթէվէֆանըն վալիլէյնի վէ
չէհրիմիլ Մաքէթնիտա շիրքէթի
թարաֆընտան միւսաստիպ կէօրիւ-
տիկի իւզրէ, պու բագար կիւնիւ
պուլկար քիլիսէսինտէ Հոգեհան-
գիստ այնը իճրա օլընտը: Միւ-
լթէվէֆանըն բէտէրի տախի էսքի
գօմիթլէրտէն օլուպ, Պուլկա-
րիանըն սէրպէստիյէթինէ ֆէտա-
քեառանէ չալըշմըլ, վէ պու կիւնտէ
քէնտի էվլատընըն վաթան նամընա
ֆէտա օլընմասընը մաթէմագ
մաղրուրիլէթլէ կէօրմիլ տիր:

— Պուլկարիանըն բէսմի կազէ-
թաընըն պէյանը իւզրէ, Տիւլիւ-
մէթ Մաքէթնիտա գօմիթլէրի-
նին նիգամարզ ամէլիաթընը գա-
թիէն մէնն իթմիլ օլուպ, էկէր
պուլկար պիր ճիւրմտէ պուլընը-
լարա գօմիթլէրին տախի տու-
ղընմասընա գարարը գաթի վէր-
միլ տիր:

— Քէզա պուլկար հիւքիւմէթին
իլաթիլալըն չէթլէրէ թիւֆէնկ
վէրմիլ օլտըղընա տախի չըգան
հափաթիս Աթմա Պիլիպար գա.
թիէն թէքզիպ իտուպ, աքսի օ
լարագ չէթլէր թէչքիլիսին մէնն
իթմէք իչիւն հիւքիւմէթին շէտիտ
թէտպիրլէր էլէ ալտըղընը իւլվէ
թէն պիլտիրիյօր:

— Վիւքէլա բէյիսի Մ. Տանէվ
վիեննա թարիգի իլէ Սօֆիայա
մուվպսէլէթ իթմիլ տիր, Շիմտի.
լիք ճիտտի նէ կէտնա մուվպա-
գիյէթ էլտէ իթմիլ օլտըղը պի-
տիրիմիյօր: Մ. Տանէվ՝ արգուսը
խիւաթընտա օլարագ՝ Աստրիա-
նըն խարիճիլէ նաղըրը գօնթ կօ-
լուսուլսքի իլէ կէօրիւշտէմիլ տիր.
հէր նէ գատար արամըլ վէ խա-
նէսինէ գատար կիլմիլ իսէտէ
պուլընմամըլար:

Սօֆիատան 200 քիլի Մ. Տա-
նէվի թըրէնլէ գարշըլամըլ օլտըղը
կիպի, սթասիօնտա տախի 500
քիլիտէն գիյատէ էհալի գարշը-
լայուպ աղը գօլարը իւզրէրինէ ա-
լարա «հուրա» նէտալարը իլէ ալ-
գըլամըլար տըր: Մատամ Տա-
նէվ տախի զէվճի իլէ պէրապէր
պուլընտըղընտան էհալիտէն խօ-
շամէտի թէպիլթի միւսաստիպէթլէ
պիր պուլգէթ գապուլ իթմիլ տիր:
— Մէսմուլթա վէ պաղը պուլ-
կար կազէթալարըն զաննընա պի-
նաէն, իսթիզրագ մէսէլէսի մօնօ-
բօլսըլ հալլ օլընապիլէճէք կէօրիւ-
նիյօր: Պու տէֆա ինկիլիպ պան-
գալարընտան իսթիզրագըն իմզա-
լանաճաղը միւրէվլի տիր:

— Բասկալան կիւնլէրինտէ Ֆիլի-
պէտէ Եուսագլար թէճէմիլ օլը-
նուպ, շէնլիքլէր իճրա օլընաճագ
տըր. պու միւսաստիպէթլէ 6—7
կիւն իչիւն թըրէն ֆիյաթլարը
100տէ 75 թէնզիլ օլընմըլ տըր.
չիմտիլթ պու իգրամ եալընըլ
Եուսագլարա վէ անլէրին ֆամիլեա
էֆրատընա մախտուս օլուպ, ու-
մու մէհալի անտէն իսթիֆատէ ի-
տէմէյէճէկի իչիտիլիյօր:

ՍԵՐՊԻՍ

Պաղը սըրպ կազէթալարը Ֆիր-
միլիան մէսէլէսինտէն տօլայը
պուլկարլարըն շէտիտէն բրօթէս.
թինտէն հիտտէթ տուլուպ, թիւր-
քիա վէ Սիւրպիա պէյնինտէ պիր
իթմիթագ թէչքիլ իթմէք իէք-
լիֆինտէ պուլընըլօրլար:

— Պէլկրատտան վիեննայա վէ-
րիլէն պիր մալիւմաթ իւզրէ, կէօ-
նա՝ Տանիլով իսմինտէ պիր ատէմ՝
Ֆիրմիլեան Սթիպէ մէթրօրօլիտ
թագտիս օլընըր իսէ՝ անը գաթլ
իթմէք իչիւն հաղըրլըգտա պու-
լընըր ըմըլ:

— Ֆիրմիլեանըն թագտիսինէ
Պուլկարիանըն իպրագ իթմիկի
մուսալէֆէթտէն տօլայը բրօթէսթ
իթմէք իչիւն, սըրպ թալէպէլէրի
Պէլկրատտա միթինկ թէճէմիլ
իթմէք հաղըրլըղընտա պուլընմը-
լար իսէտէ հիւքիւմէթ մէնն իթ-
միլ տիր:

— Ֆիրմիլեանըն, Պէլկրատտան
Սթանպօլա կիլմէք իչիւն հարէ-
քէթ իթմիլ օլտըղընը թէլէկրաֆ
պիլտիրիյօր:

ՐՈՒՍԻԱ

Պիր թալէպէտէն կէչէն կիւն
գաթլ օլընան տախիլիլէ նաղըրը
Մ. Սիւրպիինն ճէնաղէ ալարըն.
տա Ջսր վէ Ջարիճա տախի հաղըր
պուլընմըլար տըր:

ՊՕԷՐԼԷՐ

Սուլս միւզէքէրէսի իչիւն Պօէր-
լէրին թէրքի սիւլս թէքլիֆի ին-
կիլիլէրտէն բէտտ օլընտըղը կի-
պի, միւզէքէրէ տախի իթիւաֆ
հաւըլ օլմատըղը սէպէպլէ գա-
բանմըլ տէյօրլար. ֆագաթ Տէյլի
Մէյլին զաննը իւզրէ՝ միւսալէհէ
թալթը գարարա ալընմըլ. զիքա
պօէր մուրախաւար սօնուսա գա-
տար միւզէքէրէտէ հաղըր ըմը-
լար:

— Մ. Պալֆուրըն ինկիլիլ Բար-
լըմանընտա պէյան իթմիկի իւզրէ,
Լօրտ Գիլշէր վէ Միլնէր իքի տէ.
ֆա պօէր մուրախաւարը իլէ
կէօրիւշտիլէր: Պուլկարըն թա-
լէպի իւզրէ՝ պօէր գօմանտանլար
իլէ իսթիլարէ իթմէլէրի իչիւն՝
Գիլշէր անլէրէ սուհուլէթ տախի
վէրմիլ տիր. պու մագսէտէ մէպի
պօէր մուրախաւար Բէթթօրիա-
տան կիլմիլլէր:

Շու հալտէ սուլս միւզէքէրէսին.
կէնիտէն պալլամագ իչիւն իւշ
հաֆթա պէքէլէմէսի լաղըմ կէլէ-
ճէկի զանն օլընըլօր:

ՊԷԼՃԻԳԱ

Պէլճիգանըն էքսէրի մահէլլէ-
րինտէ գարըշըղըլ էլան տէվա
իթմէքտէ տիր: Լուվէնտէ իշճի-
լէրին ենէի պիր նիւմայիլաթ սէ
պէպլէ 6 քիլի էօլմիլ վէ 12 եա
րէլէնմիլ տիր:

— Մէլիսի մէպուսան էքսէրի-
լէթի արա իլէ ենէի ինթիլապաթ
թէլիֆինի բէտտ իթմի: Հար.
պիլէ նաղըրը էհալիլին բախանըն
թէսքին իթմէք իչիւն 60,000 աւ.
քէր սիւլս ալթընտա հաղըր պու-
լընտըղըն պէյան իթմիլ տիր:

ԵՂԱՐԱՐ Ե. ՔԷՍՏԱՆԵԱՆ

Ռուսադը վառնա

ԿՈՒՆԹԱՐԻՒ ՎՍՃԱՌԱՏՈՒՆ

Փողոց Բրիսլաւսկա

Նորահաստա մասնաճիւղս պատիւ
ունի ծանուցանել թէ սա վերջին քա-
նի մը ամսուան փորձառութեամբ գա-
ղափար մը կաղմած ըլլալով յաճախօր-
դաց ճաշակին վրայ, ուղղակի եւրո-
պական գործարաններէ անձամբ գնած
ենք ընտիր ապրանքներու շատ մը
տեսակներ, որոնք հասած են ու հե-
տզհետէ ալ կը հասնին:

Ուստի կը հրաւիրենք յարգող յաճա-
խորդներն, որ Ջատիկ առթիւ իրենց
գնումները չըրած ագնամ մը եւս այ-
ցիկն մեր վաճառատունն, ուր ինչ-
պէս գիններու արժանութեան նոյնպէս
ալ ապրանքներու լաւագոյն տեսակէ
ըլլալուն պիտի համոզուին:

Նոր հասնող տեսակներն են.

Ամեն տեսակ եւրոպական ու տե-
ղական ընտիր կօշիկներ, չլըօյ պօ-
լէր, հովանոցներ, գաւազաններ,
գուլպաներ, թաշկինակներ, խափ-
լուններ պուրնուզներ, սեղանի եւ
անկողնի ծածկոցներ, սեւ, ֆիլցե եւ
յարգէ գլխարկներ, ֆանէլներ, ա-
րանց չապիկ, կրկնոց, օձիք, ման-
չէթ եւ փողկապներ, հոտեղէններ,
ըստ վերջին նորաձեւութեան կանանց
էշարներ, պուաներ, շալեր, հող-
մահար, ձեռնոցներ, ամեն տեսակ
գոտիներ, պուլուզներ ծխատուփ,
գրամապանակ, խաղալիք եւն. եւն:

ՆԱՐԻՉ-ԼՈՒՍԱՆԿԱՐՅԸ

Թէեւ Տօպրիլը Պուլկարիայի արգ-
տիկ քաղաքներէն մէկն է ուր նկար-
չութեամբ եւ լուսանկարչութեամբ կը
պարապիմ, չը նայելով որ գտնուած
չըլանակա ալ շատ յարմար չէ մեծ
յառաջդիմութեան, բայց միշտ ալ խա-
տած եմ արուեստիս գիտական եւ ար-
ուեստական ամենավերջին կատարե-
լագործութեանց քայլ առ քայլ հետե-
ւելու, որուն շնորհիւ այսօր ունիմ
ամենավերջին կատարելութեամբ օժ-
տուած գործիքներ, որոնց հետ միա-
սին շնորհիւ նաեւ նկարչութեան
արուեստիս, այսօր կարող եմ արտադ-
րել ակոսակալական ամենակատարեա-
գործուած պատկերներ, այս ճիւղը մաս-
նաւոր կերպով մշակած եմ, որուն
մէջ նկարչութիւնը մեծ դեր ունի:

Ըսածս հաստատելու համար ձեր
մէջ լուսանկարը զրկեցէք իմ հասցէիս
եւ պիտի ստանաք անոր մեծադիւրը,
օրինակին ճիշդ նման, միայն 15
ֆրանքի փոխարէն. այն ալ ստանալէ
եւ հաւանելէ վերջ վճարելու պայմա-
նաւ:

Իսկ անոնք որ կտաւի վրայ իւզա-
ներկ, բնական գոյներով պատկերներն
կուզեն ունենալ, պէտք է ընդհա-
նուր գաղափար մը տան իրենց գոյ-
նին նկատմամբ, (երեսի, աչքերու
եւ մազի ընդհանուր գոյնը) ու պիտի
ստանան բնական մեծութեամբ իրենց
պատկերը 35 ֆրանքի փոխարէն, կըր-
կին վերոյիշեալ պայմաններով:

Թէեւ շատ տեղեր ակոսակալական
պատկերներ կը պատրաստեն, բայց
ես կը վստահեցնեմ որ եւ ոչ մէկը
այնչափ կատարելագործուած կրնայ
ըլլալ որչափ նկարչի մը պատրաստած:
Ղաւթն զի առանց կանոնաւոր ուղղորդ-
ող մէկ ակոսակալական արժէք կրնայ
ունենալ:

Մնամ յարգանք

Ն. ՍԻՍԱԿԵԱՆ

Նկարիչ Փօթօկրաֆ

(Տօպրիլ)

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войниковъ—Варна